



לְהַלֵּל

ՏԵՂԿԱՏՈՒ Բ.Վ.Ը.Մ.
ՌՈՒՄԱՆԻՈՅ ՑՐՑԱՆԻ

"ARI,"

BULLETIN

*L'UNION de CULTURE
PHYZIQUE ARMENIEN.
de ROUMANIE.*

Adr. Bulv. Carol 27
BUCAREST

Ursprungskr.

Յ. Գ. ԱԹԱՆԱՏՈՎԻՆ

SUBHĀ

Brnd. 120 kg, Urs. 20 hr

ZUSL 5 LT3

B. SUPP. FIG. 1

1 ԱԵՊՏԵՐԲԵՐ 1924

ՃԱՄԲԱՆ ՍԿՈՒԽԱԾ Ե

Երեք օրուան զբաղումներէ յետոյ Հ. Մ. Բ. Ա. Մ.
Ռումանիոյ Շրջանային Ժողովը իր տշխատանքները
աւարտեց անցեալ շարթու Քօնսթանցայի մէջ։ Նոյն
օրերուն զուգտդիպեցաւ նաև Ռումանահայ առաջին
ողիմպիական մրցումներու մնացորդ մասը, եւ մեր
շրջանի սկառուտներուն եւ մարզիկներուն տարեկան
երկրորդ բանակումը։ Երեք երեւոյթ, երեք քնալ սփո-
փիչ փաստներ մեր մարզական կետնքին՝ զարգացմա-
նը համար։

Սեր Ընթերցողները պիտի զտնեն քիչ մը անդին
անոնց երեքին ալ նկարազրութիւնը։ Մեր նպատակը
անոնց վերլուծումը Ընկը չէ հոս, ոչ ալ այդ առթիւ
ստեղծուած նոր ոգեւորութեան զովքը հիւսել թէւեւ
կային շատ մը պարագաներ՝ որոնք ընդարձակ վեր-
լուծումներ կ'ալժէին, եւ պակաս չէին խանդավա-
ռութիւն տուող վաստելը։

Պիտի քաղենք միայն կարգ մը դասեր անոնցմէ մեր վաղուան կեանքին ու զործունէութեանը համար

Երջանային ժողովը միաձայն եղաւ մեր բոլոր
շարքերուն զգացնելու համար թէ Հ. Ս. Է. Մ.ի
մէջ տիբապետովը ձեւը, արտաքինը պէտք չէ որ ըլլայ
այլ ոգին, բարոյական չէնքը: Այս պալազան անգամ
մըն ալ պէտք էր հոչակուէր ոչ միայն մեր մարզիկ-
ներուն, այլ արտասահմանի մեր եղբայրներուն ալ:
Ուզովէետեւ, ուիր է ծածկելը, հոս թէ այլուր, մեր
շարքերուն մէջ յաճախի կ'երեւան փաստեր՝ որ կը
պարզեն թէ դեռ լիապէս չէ ըմբռնուած Հ. Մ. Է. Մ.ին
ծնունդ տուող ոգին: Յաճախ է ականը կը շիոթուի ձեւ-
էին հետ: Մինչդեռ պէտքէ գերիշխէ հոգիներու աղնուաց-
ման մտահոգութիւնը՝ մարմնի դաստիարակութեան հա-
մար թափուած ճիղերուն հետեւ անոնցմէ աւելի: Անպէտա-
անասուն մըն է մարդս եթէ հոգի մը չիրէ, եւ հե-
տեւարար ոչինչ կ'արժէ զօրաւոր մարմին մը՝ եթէ
ան կառուցուած ու խնամուած չէ առողջ հոգիի մը
համար: Ու Հ. Մ. Է. Մ.ը անոր համար կը տարբերի
ժարդական ուրիշ կազմակերպութիւններէ՝ որովհետաեւ
ան հիմուած չէ զօրաւոր ջիղեր եւ զօրաւոր մկան-
ներ տալու համար նոր հասնող սերունդի մը, այլ ա-
նոր մարմինը խնամելու համար որպէսզի ան ընդու-
նակ գտանայ պարունակելու զօրաւոր հոգի: մըն ալ,
առողջ, պարտաճանաչ եւ առաքինի: Նըշանային ժո-
ղովը շեշտեց այս ոգին: Աւելին: Անոր աշխատանքնե-
ւոն դիմուր հիմնէ է առ կապէցից և թուզ մեր

բոլոր շարքերը գիտնան և մթունել այդ տպդարաբռ-
թիւնը: Այդպէսով է որ ամէն մէկս հետզհետէ պիտի
դառնանք մէկ մասնիկը հստանող տիպար սերունդի
մը, եւ Հ. Մ. Ը. Մ. Ը պիտի դաբճնեւք իր կոչումին արժանի
երկրորդ դասը ողիմպիտական խաղերը տուին:
Մեր մասնաձիւզերը մրցեցան կարելի թափով, եւ
յաղթական թէ պարտեալ բանուեցան իրավումէ մըրց-
ման նոր առիթներու կարուով: Անշուշտ որ շինիչ է
մրցելու յաղթանակին հասնելու ճիղը: Մանաւանդ
երր մրցողները կ'ոգեւորէ յաղթանակին աւելի անոր
հասնելու ճիղը: Մենք պիտի սիրէինք որ ինչ ալ ե-
ղած ըլլան սոյն առաջին ողիմպիտականին արդիւնքնե-
րը իրենց համար՝ մեր մասնաձիւզերը եւ անոնց մաս
կազմող իւրաքանչիւր մարզիկ նոր թափ, նոր օգեւո-
րութիւն ստանան ամողջ տարի մը պատրաստուելու
յաղթանակին, ու այդ ոչ թէ տեղական ազդակարու-
թեան ի հաշիւ՝ այլ իրենց ճիղը խառնելու համար
հաւաքսկան յաղթանակին տանող ընդհանուր ճիգին
մէջ, որ Հ. Մ. Ը. Մ. Ը ստանձնած այնքան ալ պատու-
խանատու գործն է:

Երբորդ դասն ուլ թող ներեկի ըլլայ քաղել մհր
բանակուռմէն: Ըստնք անմիջապէս որ անոր մասնակ-
ցող մեր մարզիկներուն մեծ ժաման սպասուածէն ա-
ւելի տուաւ հաւաքական կեանքի մը իր տեսնչն ու
տրամադրութիւնը: Բայց տեսնուեցաւ որ մեր սկա-
ռունիելը քիչ մը աւելի կը կարուին խնամքի: Նոր
Շրջանային վարչութեսն էտական դարաքը պիտի ըլլայ
ոչ թէ համագուստաւոր պատանիներս թիւը շատցնել,
այլ աշխատախիլ որ անոնք ըլլան իոկական սկառաւաներ,
արժանի այդ համագուստը կը ելու:

Բայց Քօնսթանցայի սէջ տեղի ունեցող երեք
դէպքերն ալ, — Նըշանային ժողով, ողիմպիական
մրցումներ եւ սկսուտական բանակում, — սփոփարար
նշաններն են խմորուիլ սկսող կեանքի մը, որ պիտի
զայ մեր վաղուան ոերունգը փրկիր Անոնք ապա-
գուգին թէ ճամբան սկսուած է սրդին:

Դիպուածը կը ըերէ որ այս տողերը գրողը ասկէ
14 ուրի առաջ ալ Պոլսոյ հայկական Ա. ողիմպիկական անին առթիւ զրած ըլլայ նոյն օրերու մարդական մեր միակ օլիկանին Մարմանարգի խմբագրական որ կ'ըսէ

Համբան սկսուած է, ոնիր է կանգ առնել:
Ու ինչ այժմէ ական նշանաբան,— 14 տարի ետքն
ալ, եռը չկահրէն, յուսաբեկութիւններէն յետոյ դարձ-
եալ կը խրտի մեր երիտասարդութիւնը,— քան այդ
խօսքերը թէ

Համբան սկսում է՝ սիր և կանգ տոնել:

Հ. Մ. Լ. Մ. ի

Ո Ռ Ի Մ Ա Ն Ի Ռ Յ Շ Ր Զ Ա Ն Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ր

Քօնսթանցոյի մէջ Օգոստոս 15-18 գումարուեցաւ Հ. Մ. Լ. Մ. ի Ռումանիոյ շրջանի երկրորդ Շրջանային ժողովը:

Ժողովին կը մտանակցէին Պ. Պ.

Շրջանային վարչութեան կողմէ Յ. Սիրունի, Վահէ Տիգրանի Տիգրանի Տիգրանի:

Պալքրէշէն Սիմոն Պատիկեան, Յարութիւն Ապազեան, Արտէն Սայեան, Յակոբ Պատիկեան, Կարապետ Բօլատեան:

Քօնսթանցոյի Օննիկ Սեղբռոսեան, Հրանտ Տէր Օհանեան, Անտօն Զօրյայեան:

Սիլիստրէն Սարդիս Փափաղեան, Ծերոն Պաքալեան, Յարութիւն Ղազէրեան:

Պալքրէշէն Խաչիկ Քէրփիձեան:

Արրանցի անունով Նիվան Ալթունեան:

Իսկ խորհրդակցական ձայնով նիստերուն մասնակցեցան Պ. Պ.

Թաղ. խորհուրդէն Արտ. Թովմասեան, Յովն. Կոմիկեան:

Ուսուցչութենէն Ա. Շարաֆեան, Գ. Սարայտարեան:

Արաքս միութենէն Տրդատ Թէրզեան:

Անհատապէս Օննիկ Սինանեան:

Ժողովին նախագահէց Պ. Ճիվան Ալթունեան, իսկ առենադպիրն էր Պ. Օննիկ Սեղբռոսեան:

Պ. Սիրունի՝ յանուն Հ. Մ. Լ. Մ. ի Ռումանիոյ Շրջանային վարչութեան նիստը բանալով կարդաց նոյն վարչութեան տարեկան տեղեկագիրը: Յետոյ կարդացուեցան միւս մասնաճիւղերու և որբանոցի տեղեկագիրները, եւ այդ առթիւ կարծիքի փոխանակութիւններ եղան: Բէ Շրջանային վարչութեան, թէ մասնաճիւղերու եւ թէ պատուիրակներու կողմէ ներկայացուած տուժարկները եւ թելազրութիւնները յանձնուեցան մասնախումբի մը՝ յառաջիկայ նիստին րերուելու համար բանաձեւուած:

Յետոյ կազմուեցաւ հաշուեքննիչ յանձնախումբ մը՝ Պ. Պ. Ա. Շարաֆեանէ, Արտ. Թովմասեանէ եւ Օ. Սինանեանէ բազկաշած՝ պաշտօն ունենալով քններ Շրջ. Վարչութեան եւ մասնաճիւղերու հաշիւներն ու Ռումանիոյ շրջանի յառաջիկայ տարուան պիւտճէն եւ ներկայացնել իր հղբակացութիւնները:

Ժողովը իր յաջորդ երկու նիստերուն մէջ զբացնուած բանաձեւերու քննութեամբ Ստորեւ կուտանք անոնց վաւերացուած պատճէնները: —

Յառաջիկայ Ընդհանուր Բանակումբ

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.— Յառաջիկոյ ընդհանուուր բանակումբ կատարել 1925 Աստուածածնի շարութը Աթրունկայի մէջ:

2.— Աշխատիլ որ բանակումբն մասնակցին շրջանի սկսուածներէն և մարզիկներէն մէծ թիւ մը:

3.— Իրաւասութիւն տալ Շրջանային վարչութեան յանձնեան պիւտճէն դուրս ալ հայթալիթել պիւտճէն պատճէն պատճէն:

Հ. Մ. Լ. Մ. ի Ռումանիոյ Պ. Շրջանային ժողովը

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.— Յառաջիկայ Շրջանային ժողովը գումարել 1925 Յուլիսին Պուքրէշի մէջ:

2.— Աշխատիլ որ բոլոր մասնաճիւղերը մասնակցին իրենց շրջանէն զրկուած պատուիրակներով:

3.— Միջոցներ ձեռք առնել որ պատուիրակները ընտրութիւն տեղական մասնաճիւղերու ընդհանուուր ժողովներուն մէջ 25 անդամի համար 1 պատուիրակի հաշուուր, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու բացարձակ առաւելութեամբ:

Խումանանայ Բ. Ողիմպիականը

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.— Խումանանանայ Բ. Ողիմպիականը սարքել յառաջիկայ Յուլիսին Պուքրէշի մէջ:

2.— Աշխատիլ որ բոլոր մասնաճիւղերը մասնակցին ողիմպիականին իրենց լաւագոյն ուժերով:

3.— Պատք դնել մասնաճիւղերուն վրայ որպէսդի մինչեւ Յունիսի վերջը կատարեն իրենց տեղական աթլէթիք մրցումները:

Հ. Մ. Լ. Մ. ի նպին

Շրջանային ժողովը անգամ մըն ալ հաստատելով թէ Հ. Մ. Լ. Մ. ի միայն ֆիզիքական զարգացման նուի իրուած կազմակերպութիւն մը չէ, այլ նպատակ ունի «զարգացնել անհատին մէջ պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատի զգացումներ, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ողի», կ'որոշէ

1.— Լիջօրէն հրահանգել Շրջանային վարչութեան ամուր պահել Հ. Մ. Լ. Մ. ի շարքերուն մէջ այդ ողին:

2.— Միջոցներ ձեռք առնել Հ. Մ. Լ. Մ. ի մասնակողներուն լացատրելու համար մարմնի հետ զուգնթացքար եւ հոգեկան դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, սիօթէմաթիք դաստիարակութիւններով, մտմուրով, եւ աղջն:

Կարգապահական

Շրջանային ժողովը գտնելով որ առանց ուժեղ կարգապահութեան մը Հ. Մ. Լ. Մ. ի դժուար թէ ի վիճակի ըլլայ հասնիլ իր էտէալին, կ'որոշէ

1.— Հրահանգել Շրջանային վարչութեան եւ մասնաճիւղերուն վերջին ծայր հոգ առնել կարգապահութեան Հ. Մ. Լ. Մ. ի շարքերուն մէջ:

2.— Շրջանային վարչութեան յանձնեան կարգապահական հրահանգները կարգապահական հրահանգներուն խիստ միջոցներ սահմանելով բոլոր անոնց նկատմամբ ուրուք կ'եղնեն Հ. Մ. Լ. Մ. ի ողին:

3.— Տարագրել եւ մասնաճիւղերուն հայթալիթել Հ. Մ. Լ. Մ. ի ծրագրի տեղական պայմաններու յարմարցուած:

Հ. Մ. Բ. Մ. Ամսօրեայ Տեղեկատուն

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.—Արին դարձնել Հ. Մ. Բ. Մ. ի ուկան՝ տեղեկատունթեանց կարգին տեղ տալով նաեւ տեսական նիւթերու, մարզական եւ սկառտական ծանօթութեանց, եւ Հ. Մ. Բ. Մ. ի բրօքականտին ծառայող էջերու:

2.—Հնարաւորութիւն տալ արտաստամանի մասնաձիւղերուն՝ իրենց ճիգերուն արտայայտութիւնը ունենալ Արիի մէջ:

3.—Պարտք դնել Շրջանային վարչութեան եւ մասնաձիւղերուն վրայ՝ ոչ մէկ ջանք խնայել Արիի ծառալմանը համար:

4.—Արին դարձնել կիսամսեայ, ծառալը պահելի 8 էջ, արտօնելով Շրջանային վարչութիւնը, նիւթական հնարաւորութեանց պարագային, դարձնել զայն աւելի լայնածաւալ:

Մարմնակերանքը Վարժարաններուն մէջ

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.—Կատարել անհրաժեշտ աշխատանքը որպէսզի մումանահայ թեմական Փորձագիր Մարմինը մեր գորոցներուն մէջ իրապէս պարտագիր դարձնէ մարմարթանքը:

2.—Պարտք դնել Շրջանային վարչութեան եւ րոլոր մասնաձիւղերուն վրայ, որպէսզի իրենց գործակցութիւնը ընծայեն գորոցալար մարմիններուն՝ մարմնակրթանքը իրական դարձնելու համար մեր գորոցներուն մէջ:

3.—Կատարել անհրաժեշտ աշխատանքը որպէսզի գորոցական պատանեկութեան հնարաւորութիւն արուի կազմակերպութիւն Հ. Մ. Բ. Մ. ի սկառտական եւ մարզական շարքերուն մէջ, եւ աշխատի որ այդ կերպով կազմակերպուած պատանեկութիւնը դպրոցին մէջ դառնայ տիպար տարր մը նաեւ բարոյական տեսակէ տուլ:

Եղանի Կազմակերպութեան համար

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.—Շրջանային վարչութեան արամագիրել անհրաժեշտ պիտօնէն՝ որպէսզի կարենայ աւելի մօտէն հետեւիլ մասնաձիւղերու գործաւնէութեան, եւ աւելի հնարաւորութիւն ունենայ նոր մասնաձիւղեր ստեղծելու:

2.—Արտօնել Շրջանային վարչութիւնը՝ գրամական բացառիկ միջոցներ ստեղծուելու պարագային՝ պահել մնալուն շրջանային սկառտ մարզիչ մը՝ անոր յանձնելով շրջանային քննիչի պաշտօնը եւս:

Խումանահայ Որբանոցը

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.—Մեծապէս խնամք տանիլ խումանահայ որբանոցի մարզական եւ սկառտական դաստիարակութեան:

2.—Պարտք դնել Շրջանային վարչութեան եւ մասնաձիւղերուն վրայ՝ իրենց ամէն տեսակ ոջակցութիւնը չխնայել որբանոցի կեղր. վարչութեան եւ անոր դաւառական մասնաձիւղերուն:

3.—Որբանոցի մէջ ունենալ Հ. Մ. Բ. Մ. ի ուսմանիոյ հինգերորդ մասնաձիւղ՝ զինքը զերծ կացուցանելով մասնաձիւղի նիւթական պարտադրութիւններէն:

4.—Պարտք դնել Շրջանային վարչութեան վրայ ստուգել Պութորչի մասնաձիւղին մատնանշած տխուր պատիկնը որբանոցին դուրս հանուած որբերու մասին, կատարել անհրաժեշտ դիմումները ուր որ անկ է, եւ աշխատի կարելի դարձնելու անոնց կազմակերպութիւնը Հ. Մ. Բ. Մ. ի շարքերուն մէջ:

Մասնաճիւղեաւ Ֆութպօի մրցումները

Շրջանային ժողովը պարտք կը դնէ Շրջանային վարչութեան վրայ

1.—Հնարաւորութիւն ստեղծել որպէսզի Հ. Մ. Ս. ի մասնաձիւղերու ֆութպօլի թիմերը կարենան ստեղծել չփուժ ունենալ իրարու հնու:

2.—Հնարաւորութիւն տալ անոնց օտար խումբերու հետ եւս մրցումներ ունենալ՝ ի հարկին ստեղծելով մասնաձիւղերու ֆութպօլի խումբերէն տիպար խումբ մը:

Սկառտական Դաստիարակութիւն

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.—Պարտք դնել Շրջանային վարչութեան վրայ մեծ հոգ տանիլ սկառտատական յանձնաւումը հոգ տանիլ սկառտատական յանձնաւումը:

2.—Կազմել իր կողքին սկառտակերպութիւնը իր սկառտա, ի հարկին պահնելով սկառտա. մարզիչ մը իրեւ ուսուցիչ, եւ կազմելով գորոցին մէջ առանձին խմբակները՝ հակական աշխատանքներուն, հակական զանոնք, եւ տալ անոնց անհրաժեշտ հրահանգները:

3.—Պարտագիր գարձնել գորոցներու մէջ աշակերտութեան կազմակերպութիւնը իր սկառտա, ի հարկին պահնելով սկառտա. մարզիչ մը իրեւ ուսուցիչ, եւ կազմելով գորոցին մէջ առանձին խմբակները՝ իրեւ բաղկացուցիչ մասը տեղւոյն մասնաձիւղին:

Արլեքի դաստիարակութիւն

Շրջանային ժողովը կ'որոշէ

1.—Պարտք դնել Շրջանային վարչութեան վրայ մեծ հոգ տանիլ մասնաձիւղերու տթլէթիք դաստիարակութեան:

2.—Կազմել իր կողքին աթլէթիք յանձնախումբ մը՝ իր մէկ անդամին մասնակցութեամբ՝ պաշտօն տալով անոր հետեւիլ մասնաձիւղերու աթլէթիք աշխատանքներուն, կազմակերպել դաշտին մէջ առանձին խմբակները՝ իրեւ բաղկացուցիչ մասը տեղւոյն մասնաձիւղին:

Հ. Մ. Բ. Մ. ի Օսար Մարգիկները

Շրջանային ժողովը կ'որոշէ որ

1.—Օտարներ չկարենան անդամակցիչ Հ. Մ. Բ. Մ. ի օրոշումը:

2.—Հ. Մ. Բ. Մ. ի ֆութպօլի թիմերը կարենան օտարներու մասնակցութեանէն օգտավիլ իրենց մրցումներուն մէջ հայ կա օտար խումբերու հետ:

3.—Հ. Մ. Բ. Մ. ի ֆութպօլի թիմերը գործերու առեն կրնոն օտար խումբերու մասնակցիչ, կամ օտարներ հրաւիրել իրենց ֆորձներուն:

4.— Հ. Մ. Ը. Վ. մարզիկները կրնան բացառաբար մասնակցիլ Ռումենի միացեալ թիմերու՝ օտար խումբերու հետ իրենց մրցումներուն մէջ:

Հ. Մ. Ը. Վ. Բ. Անդրեան

Շրջանային ժողովը ցանկալի գանելով նոր ընդհ. Կողմանի մը ստեղծումը կ'որոշէ

1.— Պարտք զնել Շրջանային Վարչութեան վրայ հնատամուա ըլլալ որ արտասահմանի ուրիշ երկրներուն մէջ ալ ստեղծուին շրջանային կազմակերպութիւններու

2.— Շրջանային կազմակերպութիւնները չորսի բարձրանալու պարագային՝ հրաւիրել պատգամաւորական ժողով եւ ստեղծել կեզր. վարչութիւն:

Գնահատութիւն անցեալ գործունեութեան

Շրջանային ժողովը լսելէ յետոյ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերուն զեկուցումները

1.— Շրջանային Վարչութեան գործունէութիւնը կը զանէ բաւարար՝ հակառակ առաջին արիէ մը անբաժան եղող դժուարութիւններուն:

2.— Գնահատուելի կը դանէ առասաբակ լոլոր մասնաճիւղերու ճիզերը Հ. Մ. Ը. Վ. Վարչութեանը համար, եւ կը յանձնաբարէ լավարին համերաշխ եւ կարգապահ գործակցաւթիւն:

3.— Կը թելազրէ Շրջանային Վարչութեան եւ առասաբակ լոլոր մասնաճիւղերուն՝ իրենց հաշուասպահութեան մէջ ջանապիր ըլլալ հակակիւրը կարելի դամարդ ձեւ մը պահպանելու:

4.— Աչօրինութեան կը դանէ Քոնսուլտանցայի մասնաճիւղին կողմէ վերջին մէկ ամսուան ընթացքին որդեղրուած վարչական ձեւը որով միակ անդամի մը յանձնուած է մասնաճիւղին միահեծան զեկավարութիւնը, եւ կը թելազրէ զգուշանալ նման կարգադրութիւններ առաջ բերող մինորատ մը ստեղծելէ:

Յառաջիկայ տարուան պիտին:

Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը յառաջիկայ տարուան համար հետեւեալ պիւտմէն առաջար կեց:

ՄՈՒՏՔ

Պարտէի մասնանիւլէն	4000 լե
Քոնսուլտանցայի	2500 «
Պազարնիկի	1500 «
Սիլիսրէի	1500 «
Տարեկան հանդէսէ	8000 «
Աղիմսիականէ	8000 «
Նուեւներէ	2500 «
Արիի հասոյր	20000 «
Գումար	48000 «

ԵՎՐ

Քարտուղարի	5000 լե
Դիւանական ծախսէր	2000 «
Արքանոցի մարզական պիտոյք	3000 «
Նշանաներու կազմակերպութեան	3000 «
Բանակումի	5000 «
Մարզիկներու համբուրդութեան	5000 «
Արիի տպագրութեան	20000 «
Անձեռնմխելի	5000 «
Գումար	48000 «

Հաշուեքննիչներու և ներկագիրը

Հաշուեքննիչն Յանձնախումբը ներկայացուց հետեւեալ տեղեկագիրը.

Հ. Մ. Ը. Վ. Վ. Ռ. Շրջանային ժողովի կողմէ ընտրուած Հաշուեքննիչն Յանձնախումբին քննելու համար յանձնուած էին 1. Հ. Մ. Ը. Վ. Վ. Շրջ. Վարչութեան հաշուեկչութիւնը, 2. Աղիմսիական խալերու հաշուեկիւրը, 3. «Արի»ի հաշիւրը, 4. Քոնսուլտանցայի մասնաճիւղին 5. Սիլիսրէի մասնաճիւղին հաշիւները:

Հաշուեքննիչն Յանձնախումբը նկատի ունենալով 1. Հաշուեմատեաներու Յանձնախումբի տրամադրութեան տակ չգտնուելու պարագան, 2. Մեծ մասամբ արգարացուցիչ փաստաթուղթերու բացակայութիւնը, 3. Դոյութիւն ունեցող հաշուապահական թերութիւնները մասնաճիւղերու հաշիւներու մէջ հնարաւորութիւն չունեցաւ. քննելու հաշիւները, ուստի անդրամենչա կը գանէ

1. Ծնտրել մնայուն Հաշուեքննիչն Յանձնախումբը մը և անոր յանձնել կեղանի և մասնաճիւղերու բոլոր հաշիւները քննելու Յիշեալ Յանձնախումբը հաշիւները քննելէ ետքը պալուաւոր է ներկայացնել նորընտիր Շրջ. Վարչութեան զրաւոր զեկուցում, իսկ Շրջ. Վարչութեանը զեկուցման պատճէնները պարտաւոր է դրկել մասնաճիւղերուն:

2. Մնայուն Հաշուեքննիչն բոլիէն անցնելին և անոր զրաւոր զեկուցումները ունենալի ետքը միայն Շրջ. Վարչութեանը պարտաւոր է ներկայացնել յառաջիկայ Գ. Շրջ. Ֆողովին հաշիւները:

3. Հաշուեքննիչն Յանձնախումբին առաջարկել մշակել միօրինակ ձեւ շրջաններու հաշիւներուն համար, որը Շրջ. Վարչութեան վաւերացնել տակէ վերջ պիտի պարտազրել մասնաճիւղերուն:

Քոնսուլտանցայի մասնաճիւղը ներկայացուցած էր հաշուեկչիու մէկ անդամի ստորագրութեամբ միայն, նման երեւոյններ կը նկատէ անթույլատրելի:

Նախանաչիւ.— Հաշուեքննիչն Յանձնախումբը Շրջ. Վարչութեան ներկայացուցած նախահաշիւնն մէջ հետեւեալ փոփոխութիւններն ու յաւելումները կ'առաջարկէ:

1. Ելքին մէջ բանակումի ծախսքը բարձրացնել 8000ի և ծրագրի ապագրութեան համար յատկացնել 1000 լեյ:

2. Մուռքին մէջ մասնաճիւղերու բաժինները աւել ցնել, Պուրքի 4500ի, Քոնսուլտանցա՝ 3000ի, Պազարնը և Սիլիսրէ՝ 2000ականի, տարհեկան հանդէսի եւ ողիմպիականի հասոյթները 8500ականի եւ նուէրներու հասոյթը 3000ի բարձրացնել:

Հաշուեքննիչն Յանձնախումբը անհրամենշատ կը նկատէ եւ կ'առաջարկէ որ մասնաճիւղերը եւս ունենան իրենց ընդհ. ժողովներէն հաստատուած նախահաշիւնների:

Հնտութիւն Հաշուեքննիչն Յանձնախումբի:

Մնայուն Հաշուեքննիչն Յանձնախումբի անդամ ընտրուեցան Պ. Պ. Գէորգ. Հաշիւր. Սրբինեւան, Սմբատ Մատէնեւան եւ Յարութիւն Սթանասեան:

Հնտութիւն Շրջանային Վարչութեան

Շրջ. Վարչութեան անդամ ընտրուեցան Պ. Պ. Օ. Մանսաւեան, Պ. Պ. Վաղարեան, Վ. Ալթունեան, Տօքթ. Սալրի, Յ. Սիրունի, Վ. Տիրատուրեան եւ Յ. Նշանեան:

Թ ՈՒՄԱՆԱՀԱՅ Ա. ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻ ՇԱՐՈՒԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ
ՔՕՆՍԹԱՑՈՒՑԻՉ ՄԵՋ

Հ. Մ. Բ. Մ. Խ. Ռումանիոյ Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած Ռումանայ Ա. ողիմպիական խաղերը, որոնց առաջին մրցումները Յուլիս 20 ին տեղի ունեցած էին Պուքրէշի մէջ, շարունակուեցան եւ վերջացան Դօնոսթանցայի մէջ Օգոստոս 17ին, մեծ ողեւորութիւն ստեղծելով նոյն տեղույն մէջ ալ, թէեւ դաշտի անյարմարութեան և թէքնիք շատ մը գուտարութիւններու պատճառով կարելի շեղաւ կարգ ու կանոնաւորութիւնը պահել ինչպէս անհրաժեշտ էր:

Մովային մրցումները տեղի ունեցան կէսօրէ առաջ Հայոց եկեղեցւոյ մօտակայ ջուրերուն մէջ, և վերջացան բաւական կանոնաւորութեամբ:

Դաշտային մրցումները եւ ֆութազով տեղի ունեցան նաւահանգիստի դաշտին մէջ, և վերջացան ժոմը 7.45ին, ծովային մրցումներու պատճառաւ հազիւ ժամը 5ի մօտ կարելի եղած ըլլալով սկսիլ: Այս պատճառով պէտք եղաւ յայտազրէն յապաւել կարդ մը խաղերու մրցումները:

Օրուան թագուհին էր Տիկ. Ճիվան Ալթունեան, իսկ դաշտի դատաւորներն էին Պ. Պ. Քօնսթանթինէսքու Բան, Սիմօն Պատիկեան, Օննիկ Սինանեան, Անտոն Զօրակեան, Հրանտ Տէր Օհանեան, Յարութիւն Ապազեան, Օննիկ Գէորգիւսն, Յ. Աթանասեան, իսկ Շրջանային Վարչութիւնը կը ներկայացնէր Յ. Սիրունի:

Ահաւասիկ մրցումներու արդիւնքը:

100 մէր լողալ:

1. Կարապետ Պարոնեան (Քօնսթանցա) 1' 40"
2. Մելքոն Խօրասանձեան "
3. Աւետիս Սանդուրձեան (Պուքրէշ)

1000 մէր լողալ:

1. Յովակիմ Թորոսեան (Պուքրէշ) 28' 38"
2. Տիգրան Գունատաքեան "
3. Պետրոս Կարապետեան (Սիլիստրէ)

2000 մէր լողալ:

1. Արշակ Շիրինեան (Քօնսթանցա) 54' 16"
2. Աւետիս Սանդուրձեան (Պուքրէշ)
3. Յարութիւն Մինասեան (Քօնսթանցա)

100 մէր կոնակի վրայ լողալ:

1. Կարապետ Պարոնեան (Քօնսթանցա) 1' 41"
2. Գրիգոր Ադամեան (Պուքրէշ)
3. Մելքոն Խօրասանձեան (Քօնսթանցա)

Կեցած երկայնութիւն ցատկել:

1. Վահէ Տիրատուրեան (Պուքրէշ) 2,72մ
2. Մոլոէս Շլուկեան " 2,60մ
3. Յարութիւն Ապազեան " 2,58մ

Էջ Ձողով բարձրութիւն ցատկել:

1. Օննիկ Սինանեան (անհատապէս) 2,60մ
2. Վահէ Տիրատուրեան (Պուքրէշ) 2,50մ
3. Պարութիւն Ապազեան (Քօնսթանցա) 2,21մ

Առ առած երկայնութիւն ցատկել:

1. Օննիկ Սիլլուսեան (Քօնսթանցա)	5,25մ
2. Վահէ Տիրատուրեան (Պուքրէշ)	5,14մ
3 Մոլոէս Շլուկեան "	4,68մ

Դրուցաւ:

Ֆառւլով վերջացած

Գուրքապօլ (Պուքրէշ—Քօնսթանցա)

Պուքրէշ 1 կօլ, Քօնսթանցա՝ Յ. Երկուրդ հագումը լրանալու քառորդ ժամ մնացած ընդհատուած:

Շրջ. Վարչութեան կողմէ բանակումի, Շրջ. Փողովի եւ Քօնսթանցայի մրցումներուն համար նշանակուած լիազօրը՝ խորհրդակցիւնէ յիտոյ Պուքրէշի, Քօնսթանցայի եւ Սիլիստրէի պատուիրակներուն հետ,

1.—Նկատի ունենալով որ Պուքրէշի եւ Քօնսթանցայի միջնեւ կատարուած ֆութազովի մրցումը վերջացած է և, հաջթայմը լրանալու քառորդ ժամ մնացած,

Նկատի ունենալով որ գատաւորը ընդհատուած է խաղը եւ երկուստեկ, համաձայնութեամբ որոշուած է նոյն մէկ քառորդ ժամը լրացնել յաջորդ օրը ժամը 8ին,

Նկատի ունենալով որ Քօնսթանցայի ֆութազովի խուժը կը հրաժարի շարունակել, մրցումը,

Նկատի ունենալով որ խաղը ընդհատուած առնեն 0ի դէմ 1 կօլի յաղթանակ մը ապահոված էր Պուքրէշի խուժը:

Կը վճռէ:

Ա. 0ի դէմ 1 կօլով յաղթական նկատել Պուքրէշը.

Բ. Սիլիստրէն պարտադիր Շրջ. նոր Վարչութեան կողմէ սրտեկի պայմանաժամի մը մէջ Պուքրէշը երթալ կատարելու համար նամակի առաջին տարուան ֆինալի մրցումը.

Գ. Սիլիստրէի չզալու պարագային Պուքրէշը նկատել վերջնական յաղթական:

2.—Նկատի ունենալով որ գրոշարշաւի մրցումը դաշտին վրայ ապարդիւն յայտարարուեցաւ դատաւորներուն կողմէ երկու ֆառւներ նշամարուած ըլլալով.

Նկատի ունենալով որ գրոշարշաւի մասնակցող մասնաձիւղերէն Պուքրէշն ու Սիլիստրէն կը հրաժարի ֆառւլին պատճառով իրենց տրուած վերստին մրցելու իրաւունքն.

Նկատի ունենալով որ մրցումը հաւանաբար վերջանար Քօնսթանցայի յաղթանակով.

Կը վճռէ:

Ա. Քօնսթանցայի տալ գրոշարշաւի սահմանուած արձանը

Բ. կէտերու առաւելութիւն չհաշուել Քօնսթանցայի համար:

Ռումանակայ Ա. ողիմպիականի երկու մրցումներուն ընդհանուր արդիւնքն է.—

Պաքը էլ կը չափի 44 կէտ, Քօնսթանցա՞ 35, Սիլիստրո՞ւ 1, Պաղարձը 0:

Պուքքէշի Պութապօլի խումբը Օի դէմ 2 կօլով կը
յաղթէ Պողարձըքի եւ Օի դէմ 1 կօլով Քօնսթանցայիր
Խումանիոյ ախոյեանութեան վերջնական մրցումը
տեղի պիտի ունենայ Պուքքէշի եւ Սիլիստրէշի միջեւ:

Քօնսթանցյալի մրցումներուն ախոյեան կը հըռչակուի Կարապետ Պարոնեան (Քօնսթանցա) շահած ըլլալով երկու Ա. մրցանակ, իսկ Խումանեայ ողիմպիականի բնդէ, ախոյեան՝ Յարութիւն Ապազեան (Պուքրէ), շահած ըլլալով երէք Ա. և մէկ Գ. մրցանակ:

ԲԱՆԱԿՈՒՄ

Հ.Մ. Ը. Մ.ի Ռումանիայ Երանային Վարչութեան
ուսումնական համարանցա, այգիներուն կաղմը ուրեօնեայ
բանակում մը կատարեցին Պալեէտի, Սլիվասէտի եւ
Քոնսուլանցայի սկառուները, ինչպես նաև մարզիկներուն
մեծ քիւ մը: Սոյն ուրեօնեակը անցաւ մեծապես հանե-
լի, մասնակցողներուն պարզեւելով ոչ միայն բնուրեան
կազզուրիչ օդի ու ծովիզենայ բնակուրեան մը ընծա-
յած առաւելուրիւններ, այլեւ հաւաքական կեանի մը
հանելի ժամանցը: Տեղի ունեցան մարզական զրոսան-
ներ, եւ մասնաւանդ եւեկոյեան աւանդական բացօնեայ
«կրակի ուրշ»երը, իւնց երգերով, պարերով գեղեցիկ
պահեր հայրայրեցին ոչ միայն սկառուներուն, այլ նաև
Երանակայ այգիներու բնակիչներուն:

Քօնքանցայի Թաղ. Խորհուրդը Օգոս. 16ին, շաբաթ ցուեկ, 70 հոգինոց հացիերոյթ մը Տուաւ այգիներուն մէջ երեք խաղաքներու սկառտւներուն ու մարզիկներուն:

Բանակումը պատօնակա տեւեց մինչեւ Օգոս. 18

ԿՐՓԱՄԱՐՏ

3. ԳԵՂԻՏԵԱՆԻ ՆՈՐ ՄՐՑՈՒՄԸ

Թուրքիոյ թենեւ ծանրութեանց ախոյեան Յա-
րութիւն Պէճիտեան առկէ առաջ, ինչպէս զրած է ինք
Փարիզի մէջ պարտուելէ եւ Գերմանիոյ մէջ յաղթելէ
յետոյ, Յունիս 11ին նոր մրցում մը ունեցաւ Փարի-
զի մէջ սեւամորթ առաջին սերիի կափամարտիկ Եու-
եռուի հետ, եւ հաւասար հաշակուեցաւ: Այս մրցումը
երեքսկիան վայրկեաննոց ութթէ շրջաններէ կը բաղկա-
նար: Ընդհանուր ձևին մէջ մրցումը քիչ մը խառ-
նակ տնօղի ունեցած է: այսուհանդերձ Յ. Պէճիտեան
կրցած է ցոյց տալ քիչ մը աւելի գիտութիւն՝ քան
իր հակոսակարգը որ ունկերու հին աղուէս մը կ'ե-
րեւար: Երկուստեք մէկ քանի պատեհութիւններ կոր-
ունցուցած են, մանաւանդ Արթին, մէկէ աւելի ան-
գամներ իր առջեւ անշարժ եւ անուժ կեցող եռեւուի
չէ կրցած վճռուկան հարուած մը իջեցնելը Մրցման
արդիւնքը արդարացի էր եւ վճռականորէն կարելի
չէր ըստ թէ մէկ կամ միւս կողմէ կրցած էր առա-
ւելութիւն մը ցոյց տալ:

ԱԵԴՐԱԿ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՄՐՑԱԿՄԸ

Յաւլիս 8, երեքշաբթի գիշեր տեղի ունեցաւ Հայադի Սեղբակ Պէրպէրեանի կափամարտը Խրութ Ճէք Զիվիկի հետ, Պրուքին Հինձերը Առավ բացօդ-

Եայ մարզարանին մէջ, մօտ 7000 հանդիսատեսներու ներկայութեան:

Հայոց մէջ քէմփէյնի վարիչ Տիւր Ա. Սարաֆ-
եանի ջանքերը արդիւնաւորուած էին եւ մօտ 1000
հայեր փութացած էին իրենց խանդալառ բացագան-
չութիւններով զօրաւոր թիկունք ըլլալու Հայ մար-
տիին:

Անվերտապահօրէն կարելի է ըսել թէ պուածին և
րեք բառ նաներուն մէջ Պ. Պէրպէրեան յաղթական
էր Դժբախտարար չորդորդ բառունտին մէջ ձախ աշ-
քէն ստոցաւ հարուած մը որը մըցումին ելքը ի վեաս
իրեն յեղաշրջեց. իր հարուածներու կարեւոր մէկ տո-
կոսը նպատակէն կը շեղէր. հակ սուակ ատոր իր յաջող
հարուածները այնքան զօրաւոր էին որ երրեմն բա-
ռունաներու մէջ, օրինակ 7րդ. եւ 12րդ.ին մէջ ինք
կրկին գերազանցեց իր հակառակորդը, մասնաւորա-
րար 7րդ ին մէջ քիչ մետք Զիվիկը նաք առութ ըլլար,
զանդը ճնչեց եւ Զիվիկ փրկուեցաւ:

Զորբորդ լապունտի դժվախտ հարուածը յաղթութիւնը Զիվիկին տռւած էր :

«Նիւ Եորք Ուըրլա»ի կարծիքով յաղթական էր Պէրպէրեան, եւ ևամ շատ շատ պէտք էր որ հաւասար աստիճանի վրայ նկատուեն երկուքն ալ, առանց «յաղթական»ի վճիռ տալու մէկ կամ միւս կողմին։

ՀԱՅԿ ԱՍՏՏՈՒՐԵԱՆԻ ՑԱՂԹԱՆԱԿԸ

19 Յուլիս շաբաթ երեկոյ Գահիքէի ՀՅՈՒԱՊ աթ-
լէթիք»ի մէջ տեղի ունեցաւ կափամարտի մեծ հան-
դիպումը, որու կը սպասէին շաբաթների ի վեր Եգիպ-
տոսի սրօրի շրջանակները։ Դէմ առ գէմ պիտի ելլէին
Եգիպտոսի ախոյեան (միջակ ծանրութեան) Հայկ Ա-
սատուրեան եւ տեղացի Ահմէտ Պայումի (ծանր կշռի
ախոյեանութեան թեկնածու): Պայումի 80 քիլոկրամ
կը կըսէ իսկ Հայկ 65. ծանրութեան այս խոչոր տար-
բերութեան հետ Եգիպտացին ունէր հասակի մեծ ա-
սաւելութիւնը, եւ բիրտ ուժը

Մըսումը պիտի կատարուէր 3 վայրկեաննոց 12
բառնու, 4 օնս ամրապինու ձեռնոցով:

Առաջին բառնախն Հայկ զուտ պաշտպանսպահնիւ վրայ մնաց եւ արդիլեց հակառակորդին ըորոր հարուածներ առանց սպառութիւններ

Երկրորդ բառնետին սկիզբը Հայկ անցնելով յար-
ձակողականի, իրարու յաջորդող երկու գօրաւոր հար-
ուածներ տոււաւ հակառակորդին դէմքին: Հարուած-
ներու սասակութեան չդիմանալով, Պայումի թեւերը
վեր բարձրացնելով լքեց կոխուը եւ Հայկ հոչակուեցաւ
յաղթական:

Նոյն իրիկունք ուրիշ կովամտափ մըցումներ
ալ եղան։ Գողրջեան հարուածի թիւով յազթեց Ֆէլո-
շթայնի խոկ Փէլլ պոս յազթեց Ալի Սատէքի որ թեթեւ
ծանրութեան Եղիպտոսի սիրոդ ախոյնեանն է։

Հ. Ա. Ը. Ա. Ա. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԵԶ

Օգոս. Տիկ կազմուած է Յունաստանի օրշանի
հետք. սկսուական Յանձնախումբ մը, որուն անդամ-
ներն են Պ. Պ. Պետրոս Գայլեան, Հայկ Տերտերեան, Գաս-
պար Առաքելեան, Յակոբ Աւագեան և Յարուբին Ա-
ռաքելեան։

Մեր նախորդ թիով հրատարակած էինք կատարուած մրցումներուն մանրամասն արդիւնքը, այսօր ալ կը ներկայացնենք նոյն ողիմպիսկանին առքիւ Փարփղի մեջ կազմակերպուած զանազան ուրիշ մրցումներու արդիւնքը.—

ԼՈՂԱԼ ԱՅԲԵՐՈՒԻ

800 մեր դրօւաւաւ.— 1. Մ. Նահանդ 9 վարկ. 33²/₅ երկվ. (աշխարհի մրցանիշը կոտրած):

100 մեր ազաս.— 1. Վալոմիւլլը (Մ. Նահանդ) 50 երկվ., 2. եւ 3. Ամերիկացի:

100 մեր կոնսակի վրայ.— 1. Քարհամ (Մ. Նահանդ) 1 վարկ. 13¹/₅ երկվ., 2. Ամերիկացի, 3. Հունգարացի:

200 մեր կուրծի վրայ.— 1. Սքելթօն (Ո. Նահանդ) 2 վրկ. 56³/₅ երկվ., 2. Պելճիքա, 3. Ամերիկացի:

400 մեր ազաս.— 1. Վայոմիւլլը (Մ. Նահանդ) 5 վրկ. 4¹/₁₀. երկվ., 2. Շուկացի, 3. Աւստրիացի:

1500 մեր ազաս.— Շարլթօն (Աւստրալիա) 20* վրկ. 6 երկվ. (աշխարհի մրցանիշը կոտրած):

1 բարձրէն ոստում.— 1. էվր (Աւստրալիա), 2. Շուկացի, 3. Անգլիացի:

2 բարձրէն ոստում.— 1. Հայթ (Մ. Նահանդ), 2. և 3. Ամերիկացի:

3 ցածէն ոստում.— 1. Հայթ (Մ. Նահանդ), 2. եւ 3. Ամերիկացի:

ԼՈՂԱԼ ԿԻՆԵՐՈՒԻ

100 մեր սպաս.— 1. Լաքի (Մ. Նահանդ) 1 վրկ. 12²/₅ երկվ. (աշխարհի մրցանիշը կոտրած):

100 մեր կոնսակի վրայ.— 1. Պաուէր (Մ. Նահանդ) 1 վրկ. 23¹/₅ երկվ. (աշխարհի մրցանիշը կոտրած):

200 մեր կուրծի վրայ.— 1. Սուրթօն (Անգլիա), 2. Ամերիկացի, 3. Անգլիացի:

400 մեր սպաս.— 1. Սոլբլէն (Մ. Նահանդ), 2. եւ 3. Ամերիկացի:

Բարձրէն ոստում.— 1. Պէքէր (Մ. Նահանդ), 2. և 3. Ամերիկացի:

Ցածէն ոստում.— 1. Ամիթ (Մ. Նահանդ), 2. Ամերիկացի, 3. Շուկացի:

400 մեր դրօւաւաւ.— Մ. Նահանդ 4 վրկ. 58⁴/₅ երկվրկ. (աշխարհի մրցանիշը կոտրած):

Աւարք բօլո.— 1. Ֆրանսա, 2. Պէճիքա, 3. Մ. Նահանդ:

ԹԵՆԻՍ

Պարզ այրեր.— 1. Վէնսան Ռիչար (Ամերիկացի), 2. Քրոշէ (Ֆրանսալի), 3. Տըմօրբուրկօ (Բալալացի):

Պարզ կիներ.— 1. Հէլին Վիլս (Ամերիկացի), 2. Վլասթօ (Ֆրանսացի), 3. Մէքքէն (Անգլիացի):

Զոյգ այրեր.— 1. Ռիչար-Հանթէր (Ամերիկացի), 2. Քօշէ-Պրիւնեօն (Ֆրանսացի), 3. Պօրաթրա-Բաքութ (Ֆրանսացի):

Զոյգ կիներ.— 1. Ռւայթման, Ռւիլս (Ամեր.), 2. Քօլէլ-Մաքքէն (Անգլ.), 3. Պարտոն, Կոլքէր (Անգլ.):

Զոյգ խառն.— 1. Ռւայթ-Ռւիլիթմ (Ամեր.), 2. Ժէսուր Ռիչար (Ամեր.), 3. Պուման, Թիմէր (Հօլանտ.):

ԿԲ-ՓԱՄԱՐՏ

Ճանենի ծանրութիւն.— 1. Լապարարտ (ամեր.), 2. Մաքէնզի (անգլ.), 3. Ֆէ (ամեր.):

Ախաղաղի ծանրութիւն.— 1. Սմիթ (Եոր Աֆրիկ.), 2. Թրիբուլ (ամեր.), 3. Սէ (ֆրան.):

Փեսաւ ծանրութիւն.— 1. Ֆիլիպ (ամեր.), 2. Տէսէրնիէ (պելճ.), 3. Քուալթիզի (արժանապար.):

Թէրիէ ծանրութիւն.— 1. Նիէլըն (տանըմարք.), 2. Քօրէլլօ (արժանթ.), 3. Պութայն (ամեր.):

Կէս-միջլն ծանրութիւն.— 1. Տըմարժ (պելճ.), 2. Մէնտէզ (արժանթ.), 3. Վովիս (քանատ.):

Միջին ծանրութիւն.— 1. Մարէն (անգլ.), 2. Էլուիթ (անգլ.), 3. Պէրին (պելճ.):

Կէս-ծանրութիւն.— 1. Միզէլ (անգլ.), 2. Բէթըր-ուն (տանիմարք.), 3. Սօրտալ (սորվէկ.):

Ծանր ծանրութիւն.— 1. Վոն Բուրաթ (նորվէկ.), 2. Բէթըրսըն (տանիմարք.), 3. Բորկիօ (նորվէկ.):

Բոլոր կարգերու առաջինները աշխարհի առմաթեատրուատոյն ամսութիւններն հաջոկուեցան:

ՀԵԾԱՆԻԻ

188 ֆիլումեր համբու վրայ.— 1. Պէտէչօնէ (ֆրան. 2. Հօլանտացի), 3. Համիլ (ֆրան.):

1000 մեր սերկն.— 1. Միշար (ֆրան. աշխարհի) ամաթէսա ախոյեան), 2. Մէյէ (հօլանտ.), 3. Կիւնիօ (ֆրան.):

Երկու հոգինոց հեծանիւներ.— 1. Ֆրանսացի, 2. Հօլանտացի, 3. Տանիմարքացի:

4000 մեր խմբական,— (Իւրաքանչիւր ազգ 4 հոգի) 1. Խտալիա, 2. Լէհանտան, 3. Պելճիքա:

50 ֆիլումեր.— 1. Վիլէմ (հօլանտ.), 2. եւ 3. անգլիացի:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Ազգութեանց դասաւորում.— 1. Իտալիա, 2. Ֆըրանսա, 3. Զուիցերիա:

Անհատական դասաւորում.— 1. Սթիւթէլ (սերպ.), 2. Բրաչաք (չիխ), 3. Շուբլիք (չիխ):

ՄԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փիսուր ծանրութիւն.— Կապէթի (իտալ.), 2. աւստրիացի, 3. զուիցերիացի:

Փիլումեր ծանրութիւն.— 1. Տէքոթինեի (ֆրան.), 2. եւ 3. աւստրիացի:

Միջին ծանրութիւն.— 1. Կալիմպէրթի (իտալ.), 2. եւ 3. էսթօնիացի:

Կէս-ծանր ծանրութիւն.— 1. Ռիկոլո (ֆրան.), 2. զուիցերիացի, 3. աւստրիացի:

Ծանր ծանրութիւն.— 1. Թօմանի (իտալ.), 2. աւստրիացի, 3. էսթօնիացի:

ՐԲԿՊԻ ՖՈՒԹՊՈԼ

1. Մ. Նահանդ, 2. Ֆրանսա, 3. Բուլգարիա:

ՖՈՒԹՊՈԼ

1. Աւայուկուա, 2. Զուիցերիա, 3. Շուկա, 4. Հօւլիստա:

Սկաուտին ծանօթութեան բաժինը

ԽՈՀԱՆՈ ՁՐ

Պտոյտի եւ բանակումի ատեն պէտք է ուտել ալ եւ անհրաժեշտ է լաւ ուտել, որովհետեւ մարզանքը եւ բաց ու մաքուր օղը ախորժակը աւելի շատ կը բանան:

Կարելի է ձեր ճամբուն վրայ գանել օթեւաններ, ուրբանարաւոր ըլլայ ճաշել, կոմ սպարակներ, ուր յանձն առնեն սպարաստել ձեր կերակուրը: Բայց արդեօք սկառտի մը կոչումին վայել բան է ասիկա, քոնի որ ան պէտք է միայն ինքներմէ կախում ունենայ, խնայողութիւնով տպրի եւ կրտպի մարդոց ճամբը! Ընթանայ:

Ուրեմն դուք պէտք է հողտք ձեր սնունդը եւ պատրաստէք ձեր կերակուրը:

Ձեր կերակուրին զիմաւոր նիւթը պիտի կազմեն ընդեղէնները, որոնք սակայն պէտք է ինստավով, մտքրութիւնով եւ զանազանութիւնով պատրաստուին եւ ախորժահամ ըլլան: Նոյն ընդեղէնը՝ գէշ եփուած կամ անչափ զրուած՝ կը դառնայ անմարսելի, քիչ անդարար եւ վեսասկար սոնմոքնին:

Յածախ պէտք է ունենաք տաք կերակուր, պաղ ճաշն ու ընթրիքը պէտք է բացառիկ ըլլան, որովհետեւ անոնք պակաս առողջարար են:

Լաւ խոհանոց ունենալու անհրաժեշտ պայմաններն մէկն ալ օնունդի նիւթերուն ընտրութիւնը եղնումն է: Ասոնք կը կազմեն ընթացիկ կեանքի դասը, որը կարելի է սորվիլ չուկան երթալով եւ զործնապէս տնական տնտեսութեան անհրաժեշտ նիւթերը դնելով:

Սկառուտ մը պէտք է խնայասէր ըլլայ, բայց խընայողութիւնը չի նշանակեր գնել ստորին տեսակի աման սնունդի նիւթեր: Առած մը կայ, որ պէտք չէ ուշադրութենէ վրիպեցնել, «Դրամիդ համեմատ կը նա գնել»: Պէտք է ճիշտ եւ համեմատական գինով լաւ ապրանք փնտուէք:

Ուրեմն բառին բուն առումով խնայասէր ըլլայու համար պէտք է զիտնալ ընտրել ու ճանչնալ: Այս ճանաչումէն կախուած է ոչ միայն լաւ անդառութիւնը, այլեւ առողջութիւնը: Անա այս պատճառով պէտք է կարենաք զանազանել լաւ միսը՝ գէշէն, զուտ կաթը՝ խառնուածէն, թարմ հաւկիթը, անխարդախնդը, ի մի բան բոլոր սնունդի վերաբերեալ նիւթերը, որոնց մասին ծանօթութիւններ ստանալու համար սպասեցէք «Արի»ի յաջորդ թիւին:

Սկաուտը բնութեան մէջ

ԱՐԵԽԵԼՈՒՄ

Երբ պտոյտի ատեն անդամ մը ինքնինքնիդ աշպատ զդաք և բաււական ժամանակ ալ ունենաք՝ ըընութիւնը լիովին վայեկերու համար կ'անցնիք լեռ ու ձորեր, կը թափառիք այս ու այն կողմ: Բայց ժամանակ մը յետոյ, յոդնած ու անօթեցած՝ կ'ուզէք վերադառնար եւ ահա այս պարագային հարկ կ'ըլլայ, որ զիտնաք թէ ուր էք:

Զկան ձեր տհողութեան առջեւ ձեզի ծանօթ չէնքերը, ձառերը, կամ սարերը որպէսդի հնարաւութեան մէջ մէջ մասին կը զրենք յաջորդ թիւին մէջ: Յ. Գ. Ա.

բութիւն ունենաք ձեր ուղղութիւնը որոշելու: Բնութիւնը կը մնայ միակ ուղեցոյցը, որմէ կրնաք առաջնորդուիլ:

Երկինքի երեսը ձեզի առաջնորդ կրնան ըլլայ ցորեկը Արեւը, իսկ գիշերը՝ կուսինն ու աստղերը:

Արեւը ցորեկ ատեն լաւ առաջնորդ մըն է, զիտէք որ անիկա առաւոտուն կը ծաղի արեւելքէն, եւ իրիկունը կ'անհետանայ արեւմուտքը: Կէսօրին երբ մնը դէմքը դարձնենք Արեւին, հիւսիսը կը մնայ մեկը կոնակը: Որքան որ ամառ տաեն կէսօրին Արեւը զրեթէ ճիշտ մեր զիմուն վերեւը, Զենիթին վրայ կը գտնուի, որով այդ տաեն չենք կրնար որոշել կողմը, բայց կէս ժամ յետոյ ան արդէն զզալի կերպով կը տեղափոխուի, այս տաեն ծառերն ու միւս բարձրութիւնները իրենց չուքը կը տեղափոխին կամաց գամաց հիւսիսէն դէպի արեւելքը, քանի որ Արեգակը կը ճամբրորդէ արեւելքէն դէպի արեւմուտք:

Լուսինը, հակառակ իր զանազան փուլերուն, զիշեր ատեն կրնայ մեղի լաւագոյն կերպով օգտակար ըլլալ, քանի որ ան ալ արեւին նման կը ճամբրորդէ արեւելքէն դէպի ու ընդուտքը:

Իսկ աստղերէն առաջնորդուելու համար ոչ մէկ դժուարութիւն կայ, տնօնց մէջ: մէկը, Բնեւուալին կամ Հիւսիսային ասող կոչուած, որ միշտ հիւսիսաւ:

* Հիւսիս. ասող

յին կողմը կը դանուի, որով բաւական է միայն ճանչնալ այդ ասողը: Ղական աստղերէ բաղկացած եւ հակառակ ուղղութիւնով երկու խումբ աստղեր կան, ինչպէս վերի պատկերին մէջ կ'երեւի, աջ կողմինը, որ մէծ է Մեծ արջ կը կոչուի, լսկ ձախ կողմինը՝ Փոքր արջ, ահա այս Փոքր արջի ծայրի աստղն է Հիւսիսային աստղը, որ կը ցուցնէ հիւսիսը:

Հիւսիսային ասողը միշտ նոյն տեղը կը մնայ, իսկ միւս բոլոր աստղերը կը դառնան անոր շուրջը, անանկ որ գիշերուան տարբեր ժամերուն այդ աստղերը տարբեր տեղիր կը տեսնենք, բայց իրարու հետ ունեցած դիրքերնին նոյնը կը մնայ:

Մեծ արջին բոլոր աստղերն ալ փայլուն են, Փոքր արջին աստղերը ընդհակառակը քիչ կը փայլին, անանկ որ առաջին անդամ երկինքի երեսը պէտք է փնտուի Մեծ արջը, որուն քառանկիւնին գլուխի երկու աստղերուն ուղղութիւնով եւ անօնց իրարմէ ունեցած հեռաւորութեան հինգ անդամին չափ հեռաւորութեան վրայ կը գտնուի Հիւսիսային աստղը:

Կողմքերը ճշտելու տարբեր միջոցներ ալ կան, որոնց մասին կը զրենք յաջորդ թիւին մէջ: Յ. Գ. Ա.